ՄԻՏՔ-Ի ՅԱՐԲԵՑՈՒՐԱԾ

№ 16 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆԻՍԻ 17-ին Հատը 2 շահի № 3

## Ո՞Վ ՀԱՒԱՏԱՑ

—

Խորշակահար բերանները խօսեցին մի խաբեբայական և ստապատում թըռուցիկով, որի տակ վախեցել էին դնել տպարանի անունն անգամ։

Դալարւում է Թայֆան։ Ուզում է վարկ շահել հոգաբարձական ընտրութեան առթիւ, բայց մնում է տարակուսած և մոլոր, որովհետև իւր արինալի և բռնապետական անցեալը ամօթի և համակրանքի տեղ չի թողել այլ ևս։

Այնուամենայնիւ վերջին փորձ։ Ոսկեզօծ խօսքեր, սիրուն գաղափարներ...Թերևս գտնուէին միամիտներ, որ ընկնէին իրենց փարախը։

Այդ հոգեբանութեամբ էլ նոքա երէկ ասպարէզ եկան մի թռուցիկով՝ ուր մեղադրուած էին բոլոր անմեղները և սրբացուած՝ խայտառակութեան հերոսները։

Ո՞վ հաւատաց։ Արդէն հաւատ դէպի Թայֆան՝ չկայ ոչ մի կարգին և ինտելիգենտ ու ճենտլմէն շրջանում։ Թռուցիկի ընթերցանութիւնը յառաջ բերեց ամենքի մէջ խորին նողկանք և ակամայ մի արտաբերութիւն, թէ այսքան էլ անամօթութիւն, թէ՛ անում են եւ թէ՛ ուրանում։ Դեռ լաւ է աչքներիս առաջ է կատարուել Զաքոյական կոմեդիան եւ պատկառելի ժողովի վիժումը, ասում են ամենքը։

Թայֆան մեղադրում է ծխատէր Համայեակ քահանային։

Ի՞նչումն է նրա մեղքը։

—Թայֆայի ապառւմ և միակ երկու խօսողներն ու խանգարիչները պատկառելի ժողովի, ասում էին, որ իրենք խօսում են յանուն կանոնադրութեան։

Ըստ այդ կանոնադրութեան, տէր Համայեակը չանուանեց Թայֆայի բերանից մի քանիսին իբրև իրաւասուներ, որովհետև այդպիսիք 21 տարին չէին լրացրել։

Զափաբերական մատեանն ևս եկաւ վկայելու տէր Համայեակի օրինապահութիւնը և Թայֆայականների սուտ կանոնասիրութիւնը։

Սաղինեան Ալէք. Կարապետեան Բագրատ, Նիկողայոսեան Գրիգոր ... համաձայն չափաբերականի գրկուեցան ձայնից։ Ուրիշ խօսքով չանցաւ բլոկիստների պաղլօզը։ Ապա տէր Համայեակը չանուանեց նաև 1-2-ին, որոնք նոյնպէս ծուխ չեն եղել և ըստ կանոնադրութեան որոշեալ տուրքերը չեն վճարել։ Օրէնքն այլ ևս ատելի դարձաւ բռունցքի երկպառակներին, որոնք փողոցային խօսքերով վիրաւորեցին օրինապահ և անմեղ քահանային և կուռի ժամանակ էլ փայտահարեցին նորան սրբազանի ներկայութեամբ։

Սրբազանի ամբողջ յանցանքն այն էր, որ աղաղակող, հայհոյող և հակառակ իր պատուէրի ծխող*) ու ժողով խանգարող պարոններին դուրս չարեց ժողովից և չպաշտպանեց իւր ստորադրեալին։ Մոռացանք յիշել, որ Թայֆայի պատուիրակներից մէկը եղաւ և իրենց մի ձայնաւորը, որ ստիպուած եղաւ կամովին հեռանալ և ասել ես ծխական չեմ այլ կաթոլիկ, երբ նրան հարց առաջարկեց սրբազանը։

Ծուռ քանոնից ուղիղ գիծ դուրս չի գայ։ Երբ դուք հոգով ծուռ էք և կեղծիքի սիրահար, ինչով է մեղաւոր Հմ. քահանան, որ նրա ուղղամտութիւնը չէր յարմարւում ձեր ծռամտութեան հետ։

*) Որոնցից մէկը մի Լիլաւացի ուսուցիչ էր, իր նմաններով։

Խ. Ս.-ի խայտառակութիւնը մենք զանց ենք առնում յիշել, որովհետև դա կնշանակէր ձեզ հետ վէճի բռնուել և ի նանիրս ապացուցել, որ մածունը սպիտակ է, երբ դուք յամառօրէն կրկնում էք, որ ոչ՝ սև է։

Տէր Վարդանեանը «տխրահռչակ է»։ Ո՞վ արդէն տէր է այլ հռչակի, երբ ձեզանից չէ։ Եթէ Շէգօ և Մուշեղ տէր Օհանեանների սպանիչների բանակին չպատկանելը «տխրահռչակութիւն» է, ապա այդ պատիւ է մեզ համար։ Բայց այս առթիւ մենք ձեզ հետ տեսնուելիք շատ ունինք և կունենանք։

Դուք խօսում էք ձեր թեկնածուների «գործունեայութիւնից»։

Դուք երէկ Թաւրիզում, Սալմաստում, Սովուշբուլաղում երկու անգամ իրար վրայ սևացրիք նոյն այդ մարդկանց, թեմ. պատգմ. ընտրութեանց միջոցին, իբրև ոչ-Թայֆայականների, որոնց այսօր քծնում և աղաչում էք, որ ընդունեն ձեր դնելիք թեկնածութիւնը։ Երէկ էիք ազնիւ ու շողոքորթ, թէ այսօր։

Միամիտ ամբոխին մոլորեցնելու համար՝ դուք հոգաբարձու էք հռչակել մեր թեկնածուներին և նրանց ստուերի տակ դրել՝ կամ առաջ էք քշել ձեր Թայֆայականներից։ Այդ էլ նոր մեթամօրֆօզ է։ Միթէ կարող են հոգաբարձու լինել նոքա, որոնք երէկ մեծ վաճառականների տետրակներն էին կնքում և կամ՝ բեռ պահել տալիս Աստառայում։

Դո՞ւք Լիլաւայի դպրոցը բարձրացրի՞ք։ Ապա տուէք պ. Թադէոսի 15,000 թումանի հաշիւները։

Թէ դուք ո՞րքան համերաշխական էք, այդ յայտնի է նրանից, որ դուք ամենաստոր միջոցներով հեռացրիք քաջակորով Մուրադեանին, որ կենտրոնական էր ուզում հիմնարկել. այդ յայտնի է նրանից, որ դուք մահու չափ հակառակ էիք և Կարապետ Վարդապետի այդ ձեռնարկին, որը գլուխ եկաւ ժողովրդի մարդկանց աջակցութեամբ ի հեճուկս ձեր։

Դուք ինչո՞ւ այսօր էք խօսում յանուն ձեր միշտ ատած համերաշխութեան։ Ո՞ւր է թաղուած շան գլուխը։

Սակայն ինչ էլ ասէք, ո՞րպիսի ոսկեզօծ մտքեր ու բառեր էլ թըմբկահարէք, ձեզ այլ ևս հաւատացող չկա՛յ։ Ձեր փորացաւը ամենքն են հասկացել և հասկանում։

Շէքսպիրն ասում է. մի՛ հաւատացէք կնոջ ո՛չ երդումներին և ո՛չ էլ արտասուքներին։

Մենք ասում ենք. մի՛ հաւատացէք Թայֆայի ոչ ոսկեզօծ ու մոլորիչ խօսքերին և ոչ նրանց «արտասւութեանց։»

Ի՞նչպէս հաւատալ այն վարկաբեկ կազմակերպութեան, որին իր մաֆիակերպ արարքների համար վերջին տարիների հայ մամուլը անմահացրեց դուլղուրականներ տիտղոսով։ Այդպիսիք՝ հեռո՛ւ ժողովրդից։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Միտք շաբաթ.-ի յարգելի պ. խմբագրին

Խնդրում եմ բարի եղէք ձեր թերթի յառաջիկայ համարում տեղ տալ երկտողիս։

Բացուելով կենտրոնական դպրոցի պարտէզի մուտքը զբօսանքի համար, մենք յոյս ունէինք որ յարգելի հոգաբարձութիւնը ի նկատի ունենալով ապրուստի թանգութիւնը և պակաս գործ ունենալը, մի այնպիսի արժէք կնշանակէր, որ ամեն դասակարգի մարդիկ միջոց կունենային մուտք գործելու այնտեղ զբօսնելու համար. բայց, ընդհակառակը, մինչ անցեալ տարիներում մուտքի տոմսը արժէր 2 շահի այս տարի բարձրացաւ 3 շահու։ Քանի որ գործաւոր և արհեստաւոր դասակարգը շաբաթուայ մէջ ունենում է միայն մի ազատ օր, այն է կիրակին և ցանկանում է մի ժամ գոնէ մաքուր օդում զբօսնելու, երբ մտնում է պարտէզի մուտքը տոմսակ վերցնելու՝ այն յոյսով որ 3 շահի է վճարելու, դիմացն է ցցւում մի տոմսակ որի մուտքն է անխտիր բոլորի համար 1 ղրան երևի յարգելի հոգաբարձութիւնը շատ գոհ է այդ արժէքից և դիտմամբ է բարձր գին նշանակել որ իրենցից ցածր եւ իրենցից ցած աղքատ դասակարգը չհամարձակուի իրենց հանգիստն ու քէֆը վրդովել պատռած շորերով։

Ինչքան որ իմանում ենք այդ պարտէզը պատկանում է հասարակութեան և ամեն մարդ էլ, թէ հարուստ թէ՛ աղքատ թէ՛ վաճառական և թէ՛ բանւոր իրաւունք ունին մտնելու և զբօսնելու, իսկ յարգելի հոգաբարձութիւնը այնպէս գին է նշանակում որ մի բանւորի ամբողջ օրւայ աշխատավարձն է, որը ինարկէ չէ կարող տալ մի քանի ժամ զբօսնելու համար։

Բարի եղէք պարոններ և մտածեցէք նաև ձեզ չափ չէ, ձեզնից ցածր դասակարգի համար, եթէ որ նա ձեզ նման չէ բայց իր համար մարդ է և ինչ ցանգութիւն որ դուք ունէք նա էլ է ցանկանում, ինչո՞ւ ևս գրկուած միայ ամբողջ շաբաթուայ աշխատելուց յետոյ մի քանի ժամ գոնէ ազատ օդ ծծելուց, այդ մասին ինչպէս յիշում էք, անցեալ տարի «Զանգ» թերթում գրուած է եղել քանիցս անգամ որի վրայ հոգաբարձութիւնը ուշադրութիւն է դարձնել երևի թերթի միջոցով դիմելը հոգաարձութեան դուր է գալիս, որ և ստիպուած ենք լինում դարձեալ դիմելու։*

Տպում ենք նոյնութեամբ և անփոփոխ մի խումբ բանւորների այս իրաւացի դիմումը։

Ծ. Խ.

## ԼՈՒՐԵՐ

Յունիս 10-ին Ղալայում գումարուած էր երրորդ և անպատճառ հոգաբարձական ընտրական ժողով։ Լիլաւացիք ևս, օր նոյնպիսի ժողով ունէին, նոցանից ոմանք իրենց գործը թողած՝ եկել էին Ղալայի ընտրութեան ականատես լինելու։ Զարմանալին այն է, որ Ղալա էր եկել և Լիլաւայի մի հատ ու հաշուետու հոգաբարձուն։

Ղալայի ընդհ. ժողովը չտեսնուած մի երևոյթ էր, իր թուի բազմութեամբ և ծխականների ընտիր ոբակով։ Սրբազանը $1/2$ ժամ այդ հազուագիւտ ժողովը զբաղեցրեց ոչ պատշաճ ճառով։ Տեղին և հետաքրքիր չէր ասել, որ թեմ. խորհուրդ գրեթէ գոյութիւն չունի. չկայ և պակասում է թեմ. ժողովը. աւելորդ էր յիշել առաջնորդական փոխանորդ քահանայի ինչ որ միսսիայով Սալմաստ գնալը... Պէտք էր մի քանի շնորհակալական բառերով ողջունել գիտակից ծխականներին և անցնել բուն խնդրին։

Գործուած մի սխալ էր և այն որ սրբազանը, փոխանակ յարգելու ժողովի մեծամասնականների կամքը ընտրել մի նախագահ—ինքը մընաց ժողովի նախագահ և իրեն մատնեց դժուարութեանց։ Նա երկու ժամ անդադար և զուր հարց ու պատասխանի և վէճի մէջ մնաց Ղալացի՝ բայց Լիլաւի երկու վարժապետների հետ, որոնք խօսում էին «արդարութիւնից», բայց հակառակ կանոնադրութեան ժողով էին բերել և զօռով ուզում էին քուէատու դարձնել չափաբերականով ստուգուած անչափահասների, կաթոլիկ եկեղեցոյ անդամների և այնտեղ հաղորդուածների, անիրաւասուների, նոր օտարութիւնից Թաւրիզում շունչ առածների և մուրացուած խոհարարների։

Սխալ էր նաև այն, որ ծխականներից քահանային սպառնացողներին «սրիկայ» և այլ անվայել խօսքեր շռայլողներին ներողամտաբար դուրս չարեց ժողովից։ Ժողովի պիտի չթողնուէին կողմնակի և ոչ-Ղալացի մարդիկ, որոնցից մէկը ի պատասխան սրբազանի իրաւացի դիտողութեան, ժպրհեց ասել «սրբազանի կեղտոտ ակնարկի վրայ ուշադրութիւն չեմ դարձնում» անարգական խօսքը։ Այս պատճառով իրար անցաւ ժողովը և խանգարուեց ընտրութիւնը, որով իւղ քսուեց Ս. Դ-երի և Դ-երի հացին, որոնց բոլորն անպայման փըշուր փշուր էր լինելու ճնշող մեծամասնութիւն կազմող ժողովրդի կողմից, եթէ ժողովը վիժեցնելու տգեղ մանովրը ի գործ չդրուէր իրար արժեցող և ամբողջ երկու ժամ սրբազանին ցաւեցնող ու յոգնեցնող բլոկիստների կողմից։

Յունիս 18-ի համար, առաջնորդը նորէն չորրորդ (երևի ոչ վերջին) ժողով է հրաւիրել Ղալա Թաղի հոգաբարձական ընտրութեան համար։

Թէպէտ ժողովրդի մի մասը զրգռուած է ամօթ ու աբուռ չհասկացող մարդկանց բարձրացրած խայտառակութիւնից և նպատակայարմար է գտնում վտանգներից և անհամութիւններից խուսափելու համար, առաջարկել սրբազանին որ քուէատուփ դրուի առաջնորդարանում, այնուամենայնիւ մենք յորդոր եւ կոչ ենք կարդում բոլոր Ղալացիներին, առ ոչինչ համարել խայտառակութեան հերոսների սկանդալը, ծնողներին և առաջնորդին վիրաւորելը, յորդորում ենք գալ մեծ բազմութեամբ ժողովի եւ սեւացնել իսպառ՝ երեխաներից եւ ,,սօցիալիստներից'' ու Թայֆայականներից կազմուած ամօթալի բլոկը։ Բլոկիստներից Առաւօտականները՝ Արշ-ին անուանում էին «գող» կամ պլագիատ, իսկ Արշ-ը նրանց խարազանում էր «Զանգի» էջերից. բարոյական սկանդալի սրտագեղ համերաշխութի՛ն։ Իրար արժէք.

Մինչ սպասւում էր որ ամսոյս 17-ին, ըստ առաջնորդի հրաւէրի, կըգումարուէր ընդհ. ժողով, յանկարծ սրբազանը ի պատասխան ինչ որ «համերաշխակ. խմբակ»-ի անստորագիր ագդին իբր ցասումնալից ապտակ՝ փակեց ժողովը։ Մանրամասնութիւնը յաջորդիւ։

Խմբագիր հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

տպարան ,,ՓԱՐՈՍ''

# Ի. Ս. ԱՐՏԱՇԵՍ

Ինքնակալ թագավորը իր գահակալության 25-ամյակի տարեդարձի առթիվ հրամայեց ազատ արձակել հանցագործ մի քանի հոգի։ Ազատ արձակվեցին նաև մի քանի հոգի, որոնք դատապարտված էին հանցագործ չլինելու համար։ Ինչպես գրում է «Գոլոս», ազատ արձակվածներ կան նաև Սիբիրում։

Ինչպես գրում է «Գոլոս», Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը հրամայել է Սիբիրի գավառապետներին, որ ազատ արձակեն բոլոր նրանց, որոնք դատապարտված են եղել հանցագործ չլինելու համար։

Ինչպես գրում է «Գոլոս», Սիբիրի գավառապետները հրամայել են ազատ արձակել նաև հանցագործ չլինելու համար դատապարտվածներին